



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.  
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՄԻԱՎՈՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(3 հոկտեմբեր 1978 թ.)

Այս օրերին ամբողջ մեր ժողովուրդը տոնական ուրախությամբ հիշատակում է այն ճակատագրական իրադարձությունները, որով հարյուր և հիսուն տարիներ առաջ հնարավոր դարձավ Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետության խավարից և միավորումը Ռուսաստանի հետ: Հայաստանյայց մեր Մայր եկեղեցին, որ սիրում ենք հաճախ կոչել հայոց ազգային եկեղեցի, և հատկապես Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, աներեք կանգնած հայ ժողովրդի կողքին, նույն ուրախությամբ և ոգեշնչումով մասնակցում են համազգային այս տոնախմբումին:

Այսօր մենք, հայ հոգևորականներս էլ, խորապես գիտակցում ենք Արևելյան Հայաստանը քրիստոնյա Ռուսաստանին միանալու պատմական իրադարձության փրկարար նշանակությունը, որով արևելահայության համար ոչ միայն խավարից դեպի լույս մի ուստում հանդիսացավ, եկեղեցական վերակազմակերպության, հայ դպրության և հայ մշակութային կյանքի վերածնունդի տեսակետներից, այլև այդ իրադարձությունը ճանապարհ բացեց հայ ազատագրական շարժման՝ թե՛ արևելահայության և թե՛ արևմտահայության ծոցում: Առանց վարանելու կարելի է հաստատել, թե 1828 թվականը սկզբնավորումը հանդիսացավ համայն հայության ազգային գիտակցության զարթոնքին և ազատագրական շարժման ու նրա հետագա զարգացման:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումը, հայ ազատագրական շարժումը, Սարդարապատի ճակատամարտը և հայկական պետականության վերականգնումն ու արդի հայրենի վերածնունդը իր բոլոր նվաճումներով հայոց պատմության հորիզոնի վրա գտնվում են ուղիղ գծով միևնույն տրամաբանական ու նպատակալաց զարգացման ճանապարհի վրա: Այդ իրադարձությունները պատմական հանգրվաններն են հայ դատի լուծման ճանապարհին:

Մենք, Մայր Աթոռի միաբաններս, նաև հպարտ ենք այսօր, որովհետև Արևելահայաստանը Ռուսաստանին միանալու պատմությունը անմիջականորեն կապված է սուրբ Էջմիածնի գահակալների և հատկապես Ներսես Ե Աշտարակեցի Հայրապետի կյանքի ու գործունեության հետ: Անվարան կարող ենք վկայել, թե Ներսես կաթողիկոս Աշտարակեցին կենտրոնական գործող դեմքն է հանդիսացել արևելահայոց ազատագրման և արևելահայաստանի հայացման գործում: Ի մասնավորի նրա գերմարդկային ճիգերի շնորհիվ է, որ նախկին Պարսկահայաստանի հազիվ քսան հազար հայ ազգաբնակչության թիվը շատ կարճ ժամանակում քառապատկվել է: Նույնպես նրա խիզախության ու վճռականությանն ենք պարտական ռուսական զորքերի փախույն հաղթանակը Օշականի ճակատամարտում, որով փրկվեց ու Էջմիածնի վանքը և ամբողջ շրջանը բնաջնջումից: Օշականի ճակատամարտը, Ներսես Աշտարակեցու մտերիմ բարեկամ ու գործակից զոր. Կրստովսկու հրամանատարության ներքո, համեմատությունները պահելով, Սարդարապատյան մի հաղթանակ հանդիսացավ իր ժամանակին:

Ահա թե ինչու պարտավոր ենք այսօր ազգովին խոր երախտագիտությանը և հարգանքով հիշել ազատարար ու հայրենաշեն Հայրապետի՝ Ներսես Ե Աշտարակեցու հերոսական գործը:

Եվ այսօր, վերոհիշյալ պատմական իրադարձությունների և իրագործումների լույսի տակ, եթե կամենանք հայ դատի և հայ հայրենիքի ապագայի մասին խորհրդածել, ապա պարտավոր ենք իրապաշտորեն ու վճռականապես հաստատ մնալ պատմական զարգացումների նույն ճանապարհի վրա, միշտ անբաժան ռուս ժողովրդից, միշտ նրա ապահով հովանու ներքև, երբեք չմոռանալով աշխարհագրական դիրքը մեր փոքրիկ երկրի:

Պարտավոր ենք նաև ամեն ճիգ ի գործ դնել ավելի ու ավելի աճեցնելու մեր հայրենիքի ազգաբնակչությունը, ավելի ու ավելի հայացնելու այն, ավելի ու ավելի զորացնելու ու հարստացնելու արդի Հայաստանը՝ գիտության, դպրության ու ազգային մշակույթի ծաղկումով, հոգևոր նորանոր արժեքների ստեղծումով, քաղաքաշինության ծավալումով և տնտեսության ու արդյունաբերության զարգացումով:

Պարտավոր ենք նաև առավել ամրապնդել փոխըմբռնումը և համագործակցությունը հայրենիքի և սփյուռքի մեջ ապրող Մեր զավակների միջև, հիմնական նպատակ ունենալով նպաստել, որ արտասահմանի հայությունը անվարան կերպով պահպանի իր հոգևոր և ազգային ինքնությունն ու հայրենաբաղձ ոգին:

Ահա, Մեր կարծիքով, միակ իրական ճանապարհը և հնարավոր կերպը ծառայելու այսօրվա պայմաններում մեր ժողովրդի գերագույն շահերին և ամենայն հայոց մայր հայրենիքի ապագային:

Ժողովուրդների ապագան կառուցվում է նրանց պատմական անցյալի լույսով ու փորձառությամբ, ներկայի իրական հնարավորությունների պատվանդանի վրա:

Մենք, հայերս, աշխարհը թողել, ծնվել ենք այստեղ, ուրեմն աշխարհին պետք է նայենք ու աշխարհի իրադարձությունները դատենք, մեր ոտքերը ամուր հաստատած այս հողի վրա, որ մեր ճակատագիրն է, որ մեր ազգային գոյատևման միակ ամրոցն է, որ մեր ապագայի միակ գրավականն է:

Հայ ժողովուրդը այսօր ազգություն է իր արդի պետականությամբ ու հայրենաբնակ ժողովրդով, Սովետական եղբայրական հանրապետությունների մեծ Միության մեջ:

Ավելի լույս, ավելի աշխատանքի կորով, ավելի ստեղծագործ հանճար և ավելի սեր և միություն, և ի վերա ամենայնի օրհնություն և օգնականություն Աստուծո՞ւ ամենակալին, մեր վերածնված ազգին, որ ի Հայաստան և որ ի սիյոնս աշխարհի: Ամեն:

